

ՀՀ-ԹՈՒՐՔԻԱ ՄԱՀՄԱՆԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՎՐԱ

ԱՆՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Հոդվածը ստացվել է՝ 07.11.25, ուղարկվել է գրախոսման՝ 11.11.25, երաշխավորվել է տպագրության՝ 24.12.25

Ներածություն: Հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման արդյունքում ՀՀ առևտրաշրջանառության փոփոխության քննարկումն շատ կարևոր է հատկապես թե դա ինչպես կազդի ՀՀ տնտեսության վրա՝ պայմանավորելով՝ տվյալ **հետազոտության արդիականությունը**: Հետևաբար, հոդվածի **նպատակն է** վերլուծել ՀՀ-Թուրքիա առևտրաշրջանառության շարժ-ընթացը, բացահայտել թուրքական ծագում ունեցող այն ապրանքային խմբերը, որոնք ունեն բացահայտված համեմատական առավելություններ ՀՀ-ում ինչպես նաև հաշվարկել ՀՀ և Թուրքիայի Առևտրային հաշվեկշռի համաթվերը պարզելու, թե ինչպես կփոխվի ՀՀ-ի առևտրաշրջանառությունը՝ նշելու խոցելի ոլորտները: Ներկայացված նպատակի իրագործման համար հոդվածում **խնդիր է դրվել**՝

- Վերլուծել ՀՀ-Թուրքիա առևտրաշրջանառությունը
- Հաշվարկել թուրքական ծագում ունեցող ըստ ԱՏԳ ԱԱ երկիշ ապրանքային խմբերի Բալասսայի բացահայտված համեմատական առավելությունների համաթվերը ՀՀ-ում, ՀՀ-ի նույն համաթվերը աշխարհով մեկ, ինչպես նաև ՀՀ-ի և Թուրքիայի Առևտրային հաշվեկշռի համաթվերը:

- Ներկայացնել ինչպես կփոխվի ՀՀ առևտրաշրջանառությունը ՀՀ-Թուրքիա սահմանի հնարավոր բացման հետևանքով:

- Մատնանշել այն ոլորտները և ընկերության տեսականները, որոնք խոցելի կհամարվեն ՀՀ-Թուրքիա սահմանի հնարավոր բացման հետևանքով:

Գրականության ակնարկ: Փախլյանը և այլոք (2022թ.) գրավիտացիոն մոդելի միջոցով ստացված գնահատականների հիման վրա նշել են, որ ներմուծումը Թուրքիայից 2019թ.-ին շատ մոտ է եղել վերջիններիս կողմից ստացված գնահատված արժեքին, իսկ ՀՀ-ից Թուրքիա արտահանման փաստացի ցուցանիշը պակաս է եղել գնահատման արդյունքում ստացված ցուցանիշից ավելի քան 3 անգամ, ինչը ենթադրում է, որ փակ սահմանի ընդհանուր ազդեցությունն անհամաչափ է հայ արտահանողների վրա¹: Հեղինակները եզրակացրել են, որ հեռավորության յուրաքանչյուր 10%-ով կրճատումը կհանգեցնի ներմուծման 17.9%-ով ավելացմանը²: Փախլյանը և այլոք (2021թ.) իրականացրել են կոռելյացիոն վերլուծություն և պարզել, որ ՀՀ-ի ՀՆԱ-ի և Թուրքիայից ներկրվող ապրանքների ծավալի միջև գոյություն ունի ուղիղ գծային

¹ Փախլյան Ա., Աղաջանյան Ս., Վարդանյան Ս., Միքայելյան Ս., Հարությունյան Ա. (2022). «Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջափակման հնարավորություններն ու մարտահրավերները» - Երևան: Տնտեսագետ, 2022. էջ 115: («Ամբերդ» մատենաշար 57): <https://doi.org/10.52174/978-9939-61-255-3>:

² Տես՝ նույն տեղում:

կապ, և գործակիցը կազմել է 0.97, իսկ տնտեսաչափական գնահատման արդյունքում հանգել են, որ ՀՀ-ի ՀՆԱ-ի 1% աճը կարող է հանգեցնել Թուրքիայից ներմուծման աճի 0.1%-ով³:

Մովչանը (2022թ.) գրավիտացիոն մոդելի կիրառմամբ կանխատեսել էր, որ ՀՀ առևտրի կառուցվածքում Թուրքիայի մասնաբաժինը կկազմի 12%, ինչը շատ ավելի բարձր է, քան իրականում, իսկ առևտրի փոխլրացման մոդելի միջոցով ցույց է տվել, որ ՀՀ-ից Թուրքիա արտահանումը կարող է հասնել ընդհանուր ծավալի 6.7%-ի, մինչդեռ Թուրքիայից ներմուծումը գնահատվում է 12.8%: Հեղինակը եզրակացնում է, որ սահմանի բացումը կնպաստի ՀՀ-ից կապիտալ ապրանքների արտահանմանն ու ներմուծմանը, ինչը կբխի ՀՀ տնտեսական շահերից⁴:

Դեռևս 2000-ական թթ.-ներին իրականացված գնահատման արդյունքներով Թուրքիայից արտահանումը դեպի ՀՀ կարող էր ավելանալ 4.6 անգամ գյուղատնտեսական արտադրանքի, 3.4 անգամ քիմիական արտադրանքի, 2.8 անգամ մեքենաների և տրանսպորտային միջոցների և 2.6 անգամ ընդհանուր արտահանման ծավալներով՝ բացված սահմանների պարագայում:⁵

2012թ.-ին Դ. Գալոյանը և Ն. Կոտիկյանը անդրադարձել են հայ-թուրքական սահմանի վերաբացման սոցիալ-տնտեսական հետևանքներին՝ ներկայացնելով այն ապրանքային խմբերը, որոնց ներմուծումը դեպի ՀՀ կավելանա, քանի որ վերջիններս ունեն Բացահայտված համեմատական առավելություններ, նշելով, որ տարանցիկ ճանապարհների կրճատման հետևանքով գները կնվազեն, ՕՈՒՆ-ների ներհոսքը կավելանա: Հեղինակները նաև նշել են, որ ՀՀ-ն կարող է միջնաժամկետ հատվածում ստեղծել որոշ մեխանիզմներ՝ դեպի ԵՄ ավելի լայն ապրանքների տեսականի արտահանելու համար, իսկ երկարաժամկետ հատվածում երկու երկրների շուկաները կդառնան փոխկապակցված: Ըստ հեղինակների սահմանի բացումը բացասաբար կանդրադառնա գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության ոլորտների վրա, մինևույն ժամանակ կարող է նկատվել արդյունաբերական որոշ ճյուղերի սերտաճում՝ ապրանքների արժեզրթայի տարբեր օղակների կտրվածքով⁶:

Համաձայն Հ. Խաչատրյանի ՀՀ շուկան բաց է թուրքական ապրանքների համար, իսկ թուրքականը՝ ոչ, քանի որ Թուրքիան փաստացի էմբարգո է կիրառում (ոչ պաշտոնապես հայտարարված) ՀՀ-ից ներկրվող ապրանքների նկատ-

³ Pakhlyan, A., Aghajanyan, S., Vardanyan, T., Mikayelyan, T., & Harutyunyan, A. (2021). Impact of Possible Unblocking of Armenia by Turkey on the Economic Development of Armenia. *Messenger of Armenian State University of Economics*, 5, pp. 138-139. https://doi.org/10.52174/1829-0280_2021_5_127

⁴ Movchan, V. (2022, May–June). *Opening of Armenia-Turkey border: Trade impact*. German Economic Team. <https://www.german-economic-team.com/en/newsletter/opening-of-armenia-turkey-border-trade-impact/>.

⁵ Hrant Dink Foundation (2014). *Research on the Socio-economic Impact of the Turkey-Armenia Border*. Istanbul, Turkey: Hrant Dink Foundation Publications. p.24. <https://hrantdink.org/attachments/article/333/Research-Socio-Economic-Impact-of-the-Turkey-Armenia-Border.pdf>

⁶ Թորոսյան Թ., Հայրապետյան Գ., Գալոյան Դ., Հովականյան Ն., Կոտիկյան Ն., Սարգսյան Լ. 2012, Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 173-207:

մամբ, միևնույն ժամանակ Թուրքիայի շուկայի բացումը ՀՀ-ի համար կարող է սետեղծել մի քանի օգուտներ որպես թե՛

1. Կբարելավի երկրի ներդրումային դիրքը, քանի որ սահմանափակ ծավալներով շուկաները դարձնում են այն ռիսկային վայր ներդրումների համար:

2. Առավելություն է տալիս արտաքին աշխարհի հետ հաղորդակցության լրացուցիչ ուղի հանդես գալով, ինչը կխթանի նաև երկաթուղային փոխադրումները, քանի որ ներկայումս ՀՀ-ն երկաթուղային մուտք ունի միայն Վրաստանի միջոցով: Երբ բացվեն Թուրքիայի երկաթուղիները, հնարավոր կլինի օգտվել նաև Թուրքիայի բեռնափոխադրման լաստանավերից, որոնք ավելի ապահով և էժան են, քան Վրաստանի Փոթի և Բաթումի նավահանգիստների լաստանավերը⁷:

Սահմանային շրջանների թերզարգացած լինելը կարող է նաև խնդիրներ առաջացնել ՀՀ-ի համար սահմանի բացման դեպքում, քանի որ ՀՀ շուկան կբացվի հարևան երկրից գործազուրկների համար: Մյուս հնարավոր մարտահրավերը, որը հաճախ նշվում է, թուրքական ներմուծման ծավալների աճն է ՀՀ շուկայում, որը կարող է առաջանալ սահմանի բացումից հետո: Թուրքիայի համար ակնհայտ առավելություն կարող է լինել հայկական երկաթուղիներով ավելի հեշտ մուտք ստանալ Վրաստան, Ադրբեջան և Կենտրոնական Ասիա⁸: Լիբերալ քաղաքականության ինստիտուտը 2023թ. հունիսին հայ-թուրքական սահմանին գտնվող 4 մարզերի (Շիրակ, Արագածոտն, Արմավիր, Արարատ) համայնքների բնակիչների շրջանում (400 հարցված) իրականացրել է հարցում և պարզել է, որ հարցվածների մեծ մասը մտավախություն է հայտնել, որ սահմանի վերաբացումը կհանգեցնի Թուրքիայի քաղաքացիների և էժան աշխատուժի ներհոսքի դեպի ՀՀ: Հարցվածները ամենից հաճախ համաձայնել են այն պնդումների հետ, որ սահմանի բացումը կարող է հանգեցնել նրան, որ թուրքական ապրանքները կողողեն հայկական շուկան սահմանի բացվելուց հետո, սակայն 89.3%-ը կմնա իր բնակավայրում⁹:

Հեղինակները նաև եզրահանգել են, որ փակ սահմանի պատճառով սահմանափակ լոգիստիկ ենթակառուցվածքի հնարավորությունները բացասաբար են ազդել ՀՀ ապրանքների գնային մրցունակության վրա միջազգային շուկաներում, չեն խթանել ներդրումների ներգրավվմանը Թուրքիայի հետ սահմանամերձ շրջաններում, ու թեև տրանսպորտային հաղորդակցության վերաբացումը կարող է առաջացնել այլընտրանքային երթուղիներ, վերջիններս պետք է նպաստեն ինչպես արտահանման ծավալների ավելացմանը, այնպես էլ թիրա-

⁷ Khachatryan, H. (2019). Economic impacts of re-opening the Armenian-Turkish border. Heinrich Böll Stiftung Georgia, pp.1-2, https://ge.boell.org/sites/default/files/2019-11/Economic_Impacts_of_Re-opening-Khachatryan.pdf.

⁸ Տե՛ս նույն տեղում:

⁹ Լիբերալ քաղաքականության ինստիտուտ (2024). Հայ-թուրքական սահման. խնդիրներ, մտահոգություններ, առաջարկներ: Երևան, 2024, էջ 44-45: <https://liberalinstitute.am/wp-content/uploads/2024/01/հայ-թուրքական-սահման-ձեռնարկ.pdf>.

խային շուկաների բազմազանեցմանը¹⁰: Ինչ վերաբերում է առաջարկներին, ապա զեկույցի հեղինակները առաջարկել են, որ նախքան սահմանների բացումը¹¹՝

1. Իրականացվեն թիրախային ծրագրեր ուղղված գյուղատնտեսության և տեքստիլ արդյունաբերությանը, վերջիններիս կողմից ստեղծված արտադրանքը թուրքականով փոխարինելու առումով:

2. Օտարերկրյա ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտի վերանայում՝ հատկապես ռազմավարական ոլորտների կտրվածքով որոշակի սահմանափակումներ մտցնելով՝ կանխելու թուրքական կապիտալի մեծ ներհոսքը, և կարգավորումներ կիրառել անշարժ գույքի ձեռքբերման կտրվածքով՝ այլազգիների պարագայում:

3. Իրականացնել համապատասխան միջոցառումներ ՓՄՁ-ների կողմից ստեղծվող արտադրանքի մրցունակությունը՝ հատկապես գնային, քանի որ վերջիններս հիմնականում վաճառվում են տեղական շուկայում:

Մեթոդաբանություն: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ Կառավարության որոշումների¹² համաձայն 2021թ.-ին թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելք է կիրառվել՝ հատկապես պատրաստի արտադրանքի կտրվածքով (բացառություն են կազմել մի շարք ապրանքային դիրքեր, որոնք հատկապես նախատեսված են եղել միջանկյալ սպառման համար), այդ իսկ պատճառով թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման տվյալների վերլուծության հիմքում 2019-2020թթ.-ների և 2022-2024թթ.-ների տարեկան տվյալներն են, ինչպես նաև 2024թ.-ի և 2025թ.-ի առաջին կիսամյակի ցուցանիշները: ԱՏԳ ԱԱ 2-նիշ խմբերի բացահայտված համեմատական առավելությունը հաշվարկվել է Բալասայի (1965թ.)¹³ կողմից առաջարկված համաթվի միջոցով (Revealed Comparative Advantage, (BRCA)), իսկ Առևտրային հաշվեկշռի համաթիվը (Trade Balance Index (TBI))՝ Լաֆայի (1992թ.)¹⁴ մեթոդի հիման վրա: Բացահայտված համեմատական առավելության համաթիվը հաշվարկվել է հետևյալ բանաձև միջոցով՝

$$BRCA_j^i = (E_j^i/E_j)/(E^i/E) (1),$$

Որտեղ՝

E_j^i -ը i -րդ երկրի j -րդ ապրանքի արտահանման ծավալն է,

¹⁰ Լիբերալ քաղաքականության ինստիտուտ (2024). Հայ-թուրքական սահման. խնդիրներ, մտահոգություններ, առաջարկներ: Երևան, 2024, էջ 80-81: <https://liberalinstitute.am/wp-content/uploads/2024/01/հայ-թուրքական-սահման-ձեռնարկ.pdf>:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 82:

¹² ՀՀ Կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 20-ի N 1708 – Ն որոշում, «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին», <https://www.e-gov.am/gov-decrees/item/34943/>: ՀՀ Կառավարության 2021 թվականի հունիսի 24-ի N 1048 – Ն որոշում, «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին», <https://e-gov.am/gov-decrees/item/36446/>:

¹³ Balassa, B. (1965). Trade Liberalisation and “Revealed” Comparative Advantage. The Manchester School of Economic and Social Studies, 33(2), pp. 105-107, <https://doi.org/10.1111/j.1467-9957.1965.tb00050.x>.

¹⁴ Lafay, G. (1992). The Measurement of Revealed Comparative Advantages. In: Dagenais, M.G. and. Muet, P.A. (eds.), International Trade Modelling, London: Chapman & Hall, pp. 209-234.

E_j -ն աշխարհի բոլոր երկրների j -րդ ապրանքի արտահանման ծավալն է,
 E^i -ը i -րդ երկրի բոլոր ապրանքների արտահանման ծավալն է,
 E -ն համաշխարհային արտահանման ծավալն է,
 $BRCA_j^i$ -ը j -րդ ապրանքի համաշխարհային շուկայում i -րդ երկրի j -րդ ապրանքի բացահայտված համեմատական առավելության համաթիվն է¹⁵:
 Ստացված արժեքների (տատանվում են $0-\infty$) հիման վրա ապրանքները դասակարգվում են, որը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Բալասայի համաթվի արժեքների դասակարգումը¹⁶

Դաս Ա	$0 < \text{համաթվի արժեք} \leq 1$	Բացահայտված համեմատական թերություն
Դաս Բ	$1 < \text{համաթվի արժեք} \leq 2$	Թույլ համեմատական առավելություն
Դաս Գ	$2 < \text{համաթվի արժեք} \leq 4$	Միջին համեմատական առավելություն
Դաս Դ	$4 < \text{համաթվի արժեք}$	Ուժեղ համեմատական առավելություն

Առևտրային հաշվեկշռի համաթիվը ցույց է տալիս, թե տվյալ երկիրը մասնագիտանում է տվյալ ապրանքի արտահանման մեջ, թե ներմուծող է, որը հաշվարկվել է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$TBI_{ij} = (x_{ij} - m_{ij}) / (x_{ij} + m_{ij}) \quad (2),$$

Որտեղ՝

TBI_{ij} -ը i -րդ երկրի j -րդ ապրանքի առևտրային հաշվեկշռի համաթիվն է,

x_{ij} -ը և m_{ij} -ը i -րդ տվյալ երկրի համապատասխանաբար j -րդ ապրանքի արտահանումն ու ներմուծումն է¹⁷:

Արժեքները տատանվում են -1 -ից $+1$ միջակայքում: Երկիրը դասակարգվում է որպես «զուտ ներմուծող» տվյալ ապրանքի դեպքում, եթե արժեքը փոքր է 0 -ից է, և որպես «զուտ արտահանող» եթե արժեքը մեծ է զրոյից¹⁸:

Թուրքական ծագում ունեցող j -րդ ապրանքի և/կամ ապրանքային խմբի ՀՀ շուկայում բացահայտված համեմատական առավելության համապատասխան համաթվի հաշվարկի պարագայում ՀՀ բոլոր ապրանքների ներմուծումն է վերցվել, իսկ j -րդ ապրանքի դեպքում՝ վերջինիս ներմուծումը՝ ըստ ծագման երկրի:

Վերլուծություն: Ազդեցությունը առևտրաշրջանառության վրա: Մեր կողմից դիտարկվել են թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ տարածք այդ ապրանքները նաև ներմուծվել են

¹⁵ Yu, R., Cai, J. & Leung, P. (2008). The normalized revealed comparative advantage index. The Annals of Regional Science, Volume 43(1), p. 268. <https://doi.org/10.1007/s00168-008-0213-3>

¹⁶ Topcu, B., & Sarigül, S. (2015). Comparative Advantage and the Product Mapping of Exporting Sectors in Turkey. The Journal of Academic Social Science 18(18). p.335. <https://doi.org/10.16992/ASOS.856>

¹⁷ Widodo, T. (2009). Comparative Advantage: Theory, Empirical Measures and Case Studies. Review of Economic and Business Studies, Alexandru Ioan Cuza University, Faculty of Economics and Business Administration, Issue 4, p. 68.

¹⁸ Տե՛ս նույն տեղում:

Վրաստանի տարածքից, և զգալի տարբերություն կա երկու ցուցանիշների միջև (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

Թուրքական ապրանքների ներմուծումը ՀՀ և ՀՀ-ից ապրանքների արտահանումը Թուրքիա (մլն ԱՄՆ դոլար)¹⁹

	2019	2020	2022	2023	2024	2024թ. հնվ.- հուն.	2025թ. հնվ.- հուն.
Ներմուծում Թուրքիայից							
Ըստ ծագման երկրի	268.10	231.49	263.39	337.13	335.91	154.44	157.59
Ըստ արտահանող երկրի	149.93	99.11	73.99	99.71	88.84	39.69	48.03
Արտահանում Թուրքիա	2.22	0.50	61.20	6.40	0.41	0.25	0.17

ՀՀ-ից Թուրքիա արտահանումը, ընդհանուր առմամբ, գրեթե բացակայում էր (տե՛ս Աղյուսակ 2): Ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է 2022թ.-ին, երբ ՀՀ-ն Թուրքիա է արտահանել շուրջ 57.8 մլն ԱՄՆ դոլարի ոսկի²⁰: Դրա հնարավոր բացատրություններից մեկը կարող է լինել, որ դա կարող է առնչվել ռուսական ոսկու հետ, որը մուտք է գործել Հայաստան և արտահանվել Թուրքիա (հնարավոր է նաև Հայաստանի տարածքում որոշակի վերամշակում անցնելուց հետո): Իսկ երկրորդային պատժամիջոցներից խուսափելու մտավախությունը կանխել է ոսկու արտահանման հետագա հնարավորությունները, որի արդյունքում արդեն 2024թ.-ին արտահանման ծավալները կազմել են 410 հազար ԱՄՆ դոլար:

Ավանդաբար ՀՀ-ն հանդիսանում էր ԱՏԳ ԱԱ 84-րդ ապրանքային խմբում ներառված ապրանքների ներմուծողը, որը իր ծավալներով ամենամեծ ներմուծվող խումբն էր, որի ներմուծման ծավալները սկսել են աճել 2020թ.-ից սկսած և իր մեծությամբ կառուցվածքում առաջին ապրանքային խումբն էր: Հնարավոր բացատրություններից կարող են լինել ներմուծվող ապրանքների վերաարտահանումը, թուրքական լիրայի արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ²¹, կամ էլ դրանց համակցությունը: Հետաքրքրական է նկատել, որ թեպետ հագուստի արտադրությունը/թեթև արդյունաբերությունը ներկայացնող յուրաքանչյուր ապրանքային խմբի ներմուծման ծավալները զիջում էին 84-րդ խմբի ծավալներին, սակայն այդ խմբերի ընդհանուր ծավալը գերազանցել է 84-րդ խմբի ներմուծման ծավալին: Այնուհետ հաջորդել են ալյումին և դրանից պատրաստված

¹⁹ ՀՀ ՎԿ-ի «Արտաքին առևտրի տվյալների բազա՝ ըստ երկրների (2017-2025)» առցանց բազա, <https://www.armstat.am/am/?nid=717>:

²⁰ ՄԱԿ-ի «UN Comtrade» առցանց տվյալների բազա, <https://comtradeplus.un.org/>:

²¹ The World Bank. (n.d.). *World development indicators*, <https://databank.worldbank.org/source/world-development-indicators>

արտադրատեսակները, պլաստմասսա և պլաստմասսայից պատրաստված արտադրատեսակները, ինչպես նաև քիմիական մանրաթելերը և այլն: Զգալի է նաև թուրքական ծագում ունեցող գյուղատնտեսական ապրանքների ներմուծումը՝ մասնավորաբար խմբեր 06, 07 և 08:

Ընդհանուր առմամբ, եթե վերլուծենք, թե ո՞ր խմբերի կտրվածքով է թուրքական ծագում ունեցող ապրանքների բացահայտված համեմատական առավելությունները ՀՀ շուկայում, ապա դրանք բավականին շատ են (տե՛ս Աղյուսակ 3): Հետաքրքրական է նկատել, որ այն խմբերի կտրվածքով, որոնց պարագայում նկատվել է համեմատական առավելություն, Թուրքիան ոչ միշտ է հանդես եկել որպես զուտ արտահանող: Սա կարող է փաստել այն մասին, որ գնային մրցունակությունն է վճռորոշ եղել, ինչպես նաև որոշակիորեն լոգիստիկ ծախսերի ցածր մակարդակը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ ապրանքների մեծամասնությունը ներմուծվել են Վրաստանից:

ՀՀ տնտեսության երկու ոլորտի կտրվածքով է արձանագրվել մրցակցություն ՀՀ շուկայում և աշխարհով մեկ, որոնք ներկայացնող ապրանքային խմբերի կտրվածքով ՀՀ-ն ունի մրցակցային առավելություն և հիմնականում համարվում է զուտ արտահանող՝ մի շարք ապրանքային խմբերի կտրվածքով: Այդ երկու ոլորտներն են գյուղատնտեսությունը՝ մասնավորաբար բուսաբուծությունը, ինչպես նաև հագուստի արտադրությունը: Հետևաբար, ՀՀ-ն մրցակցության է հանդիպելու ոչ միայն ներքին շուկայում այլ նաև օտարերկրյա շուկաներում՝ մասնավորաբար ՌԴ-ում, որը համարվել է հիմնական արտահանման շուկան թուրքական ծագում ունեցող ապրանքների համար²²: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ մի շարք ապրանքախմբերի կտրվածքով, որ ՀՀ-ն ունի մրցակցային առավելություն և զուտ արտահանող է համարվում, Թուրքիան ևս համարվում է զուտ արտահանող: Հետևաբար այս ապրանքների դեպքում էլ ՀՀ-ն կարող է մրցակցության հանդիպել այլ երկրներում ևս, որը կսրվի ավելի էժան ապրանքների ներմուծման պատճառով միջնաժամկետ հատվածքում՝ թուրքական լիրայի ԱՄՆ դոլարի նկատմամբ կանխատեսվող զգալի արժեզրկման պատճառով մինչև 2030թ.-ը: Վատագույն սցենարի դեպքում թուրքական լիրայի փոխարժեքը 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ կարող է տատանվել 80-100 լիրայի սահմաններում²³ (2024թ.-ին՝ 32.81 լիրա²⁴, իսկ արդեն 22.12.2025թ.-ի դրությամբ՝ 42.73 լիրա²⁵): Սա նաև կսրի մրցակցությունը ՀՀ տեղական շուկայում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անմիջապես Թուրքիայից ներմուծելու շնորհիվ բեռնափոխադրման ծախսերի կրճատվելու են սահմանի հնարավոր բացումից հետո:

ՀՀ ապրանքների մրցակցությունը ՌԴ շուկայում կարող է սրվել ՌԴ ռուբլու ԱՄՆ դոլարի նկատմամբ կանխատեսվող արժեզրկման հետևանքով:

²² ՄԱԿ-ի «UN Comtrade» անցանց տվյալների բազա, <https://comtradeplus.un.org/>:

²³ EBC Financial Group. (2025, June 18). Turkish Lira to USD Rate by 2030: Will the Lira Recover? EBC Financial Group, <https://www.ebc.com/forex/turkish-lira-to-usd-rate-by--will-the-lira-recover>.

²⁴ WB. (n.d.). World development indicators, <https://databank.worldbank.org/source/world-development-indicators>

²⁵ Central Bank of the Republic of Turkey. (n.d.). Indicative exchange rates. TCMB. <https://www.tcmb.gov.tr/wps/wcm/connect/en/tcmb+en/main+menu/statistics/exchange+rates/indicative+exchange+rates>

Համաձայն ՌԴ Կենտրոնական բանկի կանխատեսումների 2026թ.-ին ՌԴ ռուբլին ԱՄՆ դոլարի նկատմամբ կարժեզրկվի և կկազմի 90.3 ՌԴ ռուբլի 2025թ.-ի համար կանխատեսվող 83.8-ի համեմատ (2027թ.-ին՝ 97.6, իսկ 2028թ.-ին՝ 102 ռուբլի)²⁶:

ՀՀ ապրանքների մրցակցությունը ՌԴ շուկայում կարող է սրվել ՌԴ ռուբլու ԱՄՆ դոլարի նկատմամբ կանխատեսվող արժեզրկման հետևանքով: Համաձայն ՌԴ Կենտրոնական բանկի կանխատեսումների 2026թ.-ին ՌԴ ռուբլին ԱՄՆ դոլարի նկատմամբ կարժեզրկվի և կկազմի 90.3 ՌԴ ռուբլի 2025թ.-ի համար կանխատեսվող 83.8-ի համեմատ (2027թ.-ին՝ 97.6, իսկ 2028թ.-ին՝ 102 ռուբլի)²⁷: Որպես դրա հետևանք արժեզրկումը «գների էֆեկտի» ուղղու միջոցով բացասաբար կազդի ՌԴ տնային տնտեսությունների իրական եկամուտների վրա, որի պարագայում նրանք կձգտեն գնել ավելի մատչելի ապրանքներ՝ մասնավորաբար թուրքական ապրանքները հայկականի փոխարեն՝ չնայած նրան, որ ՀՀ-ն որպես ԵԱՏՄ անդամ երկիր մաքսատուրքեր չի վճարելու:

Ազդեցությունը գյուղատնտեսության, գյուղաբնակ տնային տնտեսությունների և սննդամթերքի վերամշակողների վրա: 2019-2024թթ.-ին ՀՀ գյուղատնտեսական ապրանքներից հիմնականում ներկրում էր ցիտրուսային մրգեր՝ մանդարին, նարինջ, կիվի, թուրինջ և այլն: Ցիտրուսային մրգերից հետո մեծությամբ երկրորդ ներմուծման ապրանքը լուլիկն է, որը 2019-2024թթ.-ներին ՌԴ արտահանվող հիմնական գյուղատնտեսական ապրանքներից մեկն է եղել²⁸: ՀՀ-ն նաև Թուրքիայից ներկրել է տարբեր տեսակի միրգ և բանջարեղեն (տանձ, խնձոր, ելակ ու մորի, սոխ, վարունգ, ձմերուկ և սեխ և այլն), որոնք աճեցվում են ՀՀ տարածքում և, հետևաբար թուրքական լիբայի կանխատեսվող արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կարող է բացասաբար ազդել գյուղմթերքի արտադրության ծավալների վրա միջնաժամկետ հատվածում (այն պարագայում, եթե այդ ապրանքները համապատասխանում են սննդամթերքի անվտանգության նորմերին): Հայկական ծագում ունեցող գյուղմթերքի խոցելիության վերաբերյալ մտահոգություն էր արտահայտել նաև Լիբերալ քաղաքականության ինստիտուտը, ինչպես ներկայացվել էր վերը: Այս ամենի հետևանքով գյուղատնտեսության կառուցվածքում կարող է զգալիորեն կրճատվել բուսաբուծության մասնաբաժինը և որպես այլընտրանք գյուղացիական տնային տնտեսությունները կարող են դիտարկել անասնաբուծությամբ զբաղվելը, հակառակ դեպքում կամ չեն զբաղվի բուսաբուծությամբ վաճառքի նպատակով (միայն սեփական կարիքների համար) և կփորձեն գործ կգտնել այլ ոլորտում և, հատկապես, Երևանում, եթե բնակավայրը մոտ է մայրաքաղաքից, կամ էլ կարտագաղթեն/կտեղափոխվեն Երևան: Այս ամենը կարող է հանգեցնել ՀՆԱ-ի կրճատմանը կարճաժամկետ միջնաժամկետ հատվածում, ինչպես նաև գործազրկության մակարդակի աճին և տնային տնտեսությունների եկամուտների կրճատմանը:

²⁶ Central Bank of the Russian Federation. (2025, December 10). *Macroeconomic survey of the Bank of Russia*. Bank of Russia. https://www.cbr.ru/eng/statistics/ddkp/mo_br/?f-

²⁷ Central Bank of the Russian Federation. (2025, December 10). *Macroeconomic survey of the Bank of Russia*. Bank of Russia. https://www.cbr.ru/eng/statistics/ddkp/mo_br/?f-

²⁸ ՄԱԿ-ի «UN Comtrade» անցանց տվյալների բազա, <https://comtradeplus.un.org/>:

Աղյուսակ 3.

ՀՀ արտահանվող ապրանքային խմբերի բացահայտված համեմատական առավելությունները աշխարհում, Թուրքական ծագում ունեցող ներմուծվող ապրանքային խմբերի բացահայտված համեմատական առավելությունները ՀՀ շուկայում, ինչպես նաև ՀՀ-ի և Թուրքիայի այդ նույն խմբերի առևտրային հաշվեկշիռները⁴¹

Խումբ		Ապրանքախմբի Բացահայտված համեմատական առավելություններ											Ապրանքախմբի Առևտրային հաշվեկշիռը											
		ՀՀ ծագում ունեցող ապրանքների դեպքում						ՀՀ-ում թուրքական ծագում ունեցող					ՀՀ						Թուրքիա					
		2019	2020	2021	2022	2023	2024	2019	2020	2022	2023	2024	2019	2020	2021	2022	2023	2024	2019	2020	2021	2022	2023	2024
	Անվանում																							
1	Կենդանի կենդանիներ	**	***	***	**	*	**							ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶՆ	ԶԱ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
3	Չուկ և խեցգետնակերպեր, կակդամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ	*	**	**	**	*								ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ
4	Կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր, կենդանական ծագման սննդամթերք՝ այլ տեղում չնշված կամ չներառված			*	*									ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ
6	Կենդանի ծառեր և այլ բույսեր, կոճղեզներ և բույսերի այլ նույնանման մասեր. հատած ծաղիկներ և զարդաբույսեր	**	**	**	**	**	**	*	*	**	***		ԶՆ	ԶԱ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ
7	Բանջարեղեն և որոշ ուտելի արմատապտուղներ և պալարապտուղ.	**	**	***	**	*	*	***	***	*	***	***	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ
8	Ուտելի մրգեր և ընկույզներ. ցիտրուսային պտուղների կեղև ու դդմի կճեպներ	*	**	**	**			***	**	**	**	***	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ	ԶԱ
9	Մուրճ, թեյ, մատե կամ պարագվայական թեյ և համեմունքներ				*	*							ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ

⁴¹ ՄԱԿ-ի «UN Comtrade» առցանց տվյալների բազա, <https://comtradeplus.un.org/>: Հեղինակի հաշվարկ: Նշում՝ *՝ նշանակում է, որ տվյալ ապրանքային խումբը ըստ Բալասայի բացահայտված համեմատական առավելությունների համապատասխան համաթվի (BRCA) արժեքի դասակարգվել է որպես թույլ համեմատական առավելություն ունեցող խումբ, **՝ միջին համեմատական առավելություն, իսկ ***՝ ուժեղ համեմատական առավելություն: ԶԱ՝ նշանակում է, որ տվյալ ապրանքային խումբն ըստ Առևտրային հաշվեկշռի համաթվի (TBI) արժեքների դասակարգվել է որպես գուտ արտահանող, իսկ ԶՆ՝ որպես գուտ ներմուծող:

12	Յուղատու սերմեր և պտուղներ, այլ սերմեր, պտուղներ և հատիկներ, տեխնիկական նպատակների համար օգտագործվող ղեղաբույսեր և բույսեր, ծղոտ և կեր									*	**	**	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
16	Պատրաստի սննդամթերք մսից, ձկնից կամ խեցգետնանմաններից, կակղամարմիններից և ջրային այլ անողնաշարավորներից	*	*	*									ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
18	Կակաո և դրանից պատրաստված մթերք	**	*	**	*							**	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
19	Պատրաստի մթերք՝ հացաբույսերի հատիկներից, ալյուրից, օսլայից կամ կաթից, ալյուրից պատրաստված հրուշակեղեն										*	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
20	Բանջարեղենի, մրգերի, ընկույզների կամ բույսերի այլ մասերի վերամշակումից ստացվող մթերք	**	**	***	***	*	*						ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
22	Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ և քացախ	***	***	***	***	***	***						ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
23	Մենդային արդյունաբերության մնացորդներ և թափոններ. պատրաստի կերեր՝ կենդանիների համար				*								ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
24	Օխախտ և ծխախտի արդյունաբերական փոխարինիչներ	***	***	***	***	***	***						ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
25	Աղ, ծծումբ, հող և քար, ծեփագործական նյութեր, կիր և ցեմենտ	*	*	*									ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
26	Հանքաքարեր, խարամ և մոխիր	***	***	***	***	***	***						ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
28	Անօրգանական քիմիական նյութեր. թանկարժեք մետաղների, հազ-վագյուտ հողային մետաղների, ռադիոակտիվ տարրերի կամ իզոտոպների անօրգանական կամ օրգանական միացություններ										*	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
32	Դաբաղման կամ ներկման լուծամզուքներ, տանիներ և դրանց ածանցյալները, ներկանյութեր, գունանյութեր և ներկող այլ նյութեր, ներկեր և լաքեր, մածիկներ և այլ մաստիկա, տպագրական ներկ, թանաք, տուշ							**	**	**	**	***	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ

33	Եթերայուղեր և ռետինանյութեր. օծանելիքային, կոսմետիկական կամ հարդարման միջոցներ							*	*	*	*	**	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
34	Օճառ, մակերևութաակտիվ օրգանական նյութեր, լվացող միջոցներ, քսանյութեր, արհեստական և պատրաստի մոմեր, մաքրման կամ փայլեցման համար բաղադրու- թյուններ, մոմեր և համանման արտադրատե- սակներ, ծեփման համար մածուկներ, պլաստիլին, «ատամնաբուժական մոմ» և գիպսի հիմքով ատամնաբուժական բաղադ- րուք.							**	**	**	***	***	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
35	Սպիտակուցային նյութեր, վերափոխված օսլաներ, սոսինձներ, ֆերմենտներ							**	***	**	***	***	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
36	Պայթուցիկ նյութեր, հրատեխնիկական արտադրանք, լուցկիներ, հրակիր համահավաժքներ, որոշ դյուրավառ նյութեր									***	***	***	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
38	Այլ քիմիական ապրանքներ							*	*	*	*	**	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
39	Պլաստմասսա և պլաստմասսայից պատրաստված արտադրատեսակներ							**	**	*	**	**	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
40	Կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված արտադրատեսակներ										*	*	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
41	Չմշակված մորթեր (բացի բնական մորթուց) եւ մշակված կաշի							***	**	***	***	***	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
42	Արտադրատեսակներ՝ կաշվից, թամբա- համետային արտադրատեսակներ եւ լծասարքեր. ճամփորդական պարագաներ, կանանց պայուսակներ եւ դրանց նույնանման ապրանքներ. արտադրատեսակներ՝ կենդա- նինների աղիքներից (բացի շերամի ֆիբրոինից ստացված մանրաթելից							*	*	*			ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
43	Բնական եւ արհեստական մորթի, դրանից պատրաստված արտադրատեսակներ			*		*				*	**	***	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ

44	Փայտանյութ և դրանից պատրաստված արտադրատեսակներ, փայտածուխ							**	**	**	***	***	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ
45	Խցան և դրանից պատրաստված արտադրատեսակներ				*	*							զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ
46	Օդոտից, ալֆերից և հյուսքի համար նախատեսված այլ նյութերից պատրաստված արտադրատեսակներ, զամբյուղներ և հյուսածո արտադրատեսակներ									**			զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ
48	Թուղթ և ստվարաթուղթ. թղթազանգվածից, թղթից կամ ստվարաթղթից արտադրատեսակներ									*	*	*	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ
50	Մետաքս							*					զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ
51	Բուրդ, կենդանիների բարակ կամ կոշտ մազ, ձիու մազից մանվածք և գործվածք							*	*	*		*	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ
52	Բամբակ							***	***	***	***	***	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ
53	Այլ բուսական մանածագործական մանրաթելեր, թղթե մանվածք և գործվածքներ թղթե մանվածքից									***	**	***	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ
54	Քիմիական թելեր, հարթ և նույնանման թելեր քիմիական մանածագործական նյութերից							**	**	**	*	**	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ
55	Քիմիական մանրաթելեր									**	***	***	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ
56	Բամբակ, թաղիք կամ նրբաթաղիք և չգործված կտորեղեն. հատուկ մանվածք. թուղթ, պարաններ, ճոպաններ ու մետաղաճոպաններ և դրանցից պատրաստված արտադրատեսակներ							**	**	**	**	**	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ
57	Գորգեր և հատակի այլ մանածագործական ծածկույթներ				*	*		***	***	***	***	***	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ
58	Հատուկ գործվածքներ, թափակար նրբախավով մանածագործվածքներ, ժանյակներ, որմնագորգեր. հարդարման պարագաներ, ասեղնագործվածքներ							***	***	***	***	***	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ	զւ

59	Մանածագործվածքներ՝ ներծծված, պատվածքով կամ կրկնորդված. տեխնիկական նշանակությամբ մանածագործական արտադրատեսակներ							**	*	*			ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
60	Տրիկոտաժե պաստառներ՝ մեքենայագործ կամ ձեռագործ							***	***	***	***	***	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
61	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ՝ մեքենայագործ կամ ձեռագործ	*	*	*	*	*		***	***	***	***	***	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
62	Հագուստ և հագուստի պարագաներ՝ բացի տրիկոտաժե մեքենայագործ կամ ձեռագործ հագուստից և պարագաներից	***	**	***	**	**	*	*	**	***	***	***	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
63	Այլ պատրաստի մանածագործական արտադրատեսակներ, լրակազմեր, օգտագործված հագուստ և մանածագործական արտադրատեսակներ, լաթեր							**	**	***	**	**	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
64	Կոշիկեղեն, զանկապաններ և համանման արտադրատեսակներ. դրանց մասեր							**	**	**	**	*	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
65	Գլխարկներ և դրանց մասերը							*	*	*	*	*	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
68	Արտադրատեսակներ քարից, գիպսից, ցեմենտից, ասբեստից, փայլարից կամ նույնանման նյութերից											*	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
70	Ապակի և դրանից պատրաստված արտադրատեսակներ		*	*									ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
71	Մարգարիտ՝ բնական կամ աճեցրած, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, մետաղներ՝ երեսապատված թանկարժեք մետաղներով, և դրանցից պատրաստված արտադրատեսակներ, բիծուտերիա, մետաղադրամներ	***	**	**	***	***	***						ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
72	Սև մետաղներ	**	**	**	**	*							ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
73	Արտադրատեսակներ սև մետաղներից							*	*	*	*	*	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
74	Պղինձ և պղնձից արտադրատեսակներ							*					ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ

76	Այլումին և դրանից պատրաստված արտադրատեսակներ	**	***	***	**	*		*	*	**	**	***	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
78	Կապար և արտադրատեսակներ դրանից			*		*	*						ԶՆ	ԶՆ	ԶՄ	ԶՄ	ԶՄ	ԶՄ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
83	Այլ արտադրատեսակներ ոչ թանկարժեք մետաղներից							***	***	***	***	***	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՄ	ԶՄ	ԶՄ	ԶՄ	ԶՄ	ԶՄ	ԶՄ
84	Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական սարքեր, դրանց մասերը								*	*	*	*	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
91	Բոլոր տեսակի ժամացույցներ և դրանց մասերը	***	***	*									ԶՄ	ԶՄ	ԶՄ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
92	Երաժշտական գործիքներ. դրանց մասերը և պարագաները					**							ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՄ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ
94	Կահույք. անկողնային պարագաներ, ներքնակներ, ներքնակային հիմքեր, բազմոցային բարձեր և կահույքի նույնանման լցովի պարագաներ. լամպեր ու լուսավորման սարքավորումներ, այլ տեղում չնշված կամ չներառված. լուսային ցուցանակներ, լուսային ցուցատախտակ.							*	*	**	**	***	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՄ	ԶՄ	ԶՄ	ԶՄ	ԶՄ	ԶՄ	ԶՄ
96	Պատրաստի տարբեր արտադրատեսակներ							*	**	**	**	***	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՆ	ԶՄ	ԶՄ	ԶՄ	ԶՄ	ԶՄ	ԶՄ	ԶՄ

Արդյունքում՝ այն աշխատանքը, որը հնդիկ միգրանտն է կատարում ՀՀ տարածքում, կարող է նաև առանց եկամտի աղբյուրի մնացած ՀՀ գյուղաբնակ բնակիչ էլ համաձայնել այդ աշխատանքին: Այս ամենը կազդի նաև սննդամթերքի վերամշակողների վրա՝ հատկապես պահածոներ, ըմպելիքներ, չրեդեն արտադրողների վրա, եթե խաթարվի մատակարարման շղթան: Մինևույն ժամանակ ՀՀ սննդամթերքի վերամշակմամբ զբաղվող արտադրողները կարող են անցում կատարել ավելի էժան թուրքական գյուղմթերքի՝ դիմակայելու մրցակցությանը ՌԴ շուկայում, եթե չկարողանան արտադրել խիստ չափանիշներին համաձայն և արտահանել հատկապես բարձր եկամտի մակարդակ ունեցող երկրներ:

Ազդեցությունը հագուստի արտադրության ոլորտի վրա: Հագուստի արտադրության ոլորտի խոցելիության մասին փաստել էր նաև Լիբերալ քաղաքականության ինստիտուտը հատկապես տեղական արտադրանքի կտրվածքով: 2024թ.-ին դեպի ՌԴ ՀՀ-ից արտահանվող տվյալ խումբ 61-ի և 62-ի պարագայում ՌԴ-ն համարվել է առաջատար առևտրային գործընկերը, որը նաև կարող է որոշակիորեն պայմանավորված լինել վերաարտահանմամբ, մինևույն ժամանակ ՌԴ-ն ևս համարվել է Թուրքական ծագում ունեցող հագուստի պարագաների հիմնական շուկաներից մեկը⁴²: Խոցելի են համարվում այն ընկերությունները, որոնք արտադրում են հագուստի պարագաները սեփական բրենդի ներքո և վերջիններիս հիմնական սպառման շուկան ՌԴ-ն է, չնայած նրան, որ այդ ընկերությունները իրենց արտադրանքը վաճառում են տեղական շուկայում ևս: Արժեզրկվող լիրան կարող է էլ ավելի մատչելի դարձնել տվյալ հագուստի պարագաները ՌԴ շուկայում: Թեև հայկական ընկերությունները ավելի էժան հումք կամ միջանկյալ սպառման համար նախատեսված ապրանքներ կսկսեն ներմուծել Թուրքիայից, սակայն ավելի ցածր արտադրական ծախսերը/ինքնարժեքը կարող է թույլ չտան տեղական արտադրողներին դիմակայել մրցակցությանը թուրքական ընկերությունների հետ ներքին շուկայում ևս:

Ազդեցությունը արտահանողների վրա: ՀՀ ներմուծողներն և/կամ արտադրողները կարող են օգտվել սահմանի բացումից, քանի որ տրանսպորտային ծախսերը կարող են զգալիորեն ցածր լինել: Ներմուծվող միջանկյալ սպառման համար նախատեսված ապրանքների գները կարող են ևս իջնել, եթե թուրքական լիրան արժեզրկվի կարճաժամկետ և միջնաժամկետ ժամանակահատվածում: Եթե արտահանվող ապրանքների ինքնարժեքը նվազի, ապա դա կբերի նրան, որ հայկական ծագում ունեցող ապրանքները գնային առումով մրցունակ կարող են համարվել այլ շուկաներում, եթե այդ ապրանքները նաև արտահանվեն Թուրքիայի տարածքով:

Ազդեցությունը ներքին շուկայում մրցակցության վրա: Թուրքական լիրայի հետագա արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կարող է նաև սրել մրցակցությունը ներքին շուկայում և ՀՀ ընկերությունները կկորցնեն շուկայի իրենց մասնաբաժինը և ստիպված կլինեն դուրս գալ նոր շուկաներ ՀՀ-ից դուրս, եթե իրենց արտադրանքը համապատասխանի բարձր չափանիշներին: Հակառակ

⁴² ՄԱԿ-ի «UN Comtrade» անցանց տվյալների բազա, <https://comtradeplus.un.org/>:

դեպքում նրանք կդադարեցնեն իրենց գործունեությունը: Այստեղ կարևորվում է ընկերությունների արդիականացման խնդիրը: Եթե այդ ապրանքների արտահանման հիմնական շուկան նաև ՌԴ-ն է, ապա արտահանման ծավալները կարող են կրճատվել ՌԴ ռուբլու ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկման դեպքում:

Ազդեցությունը ծառայությունների արտահանման վրա: Հիմք ընդունելով Հրանթ Դինքի հիմնադրամի⁴³ կողմից իրականացված հարցումները Թուրքիայի սահմանամերձ բնակավայրերում, ՀՀ-ն կարող է հանդես գալ վերջիններիս համար, որպես գրավիչ առողջապահական զբոսաշրջության կենտրոն սահմանի հնարավոր բացումից հետո, ինչպես նաև ներգրավել ուսանողների, որոնք կարող են ուսումնասիրել անգլերենով/ֆրանսերենով: Որպես այսպիսիներ կարող են հանդես գալ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը, Հայաստանի ամերիկյան համալսարանը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը, Հայաստանում ֆրանսիական համալսարանը և այլն: Այստեղ ևս թուրքական լիրայի հետագա արժեզրկումը ԱՄՆ դոլարի հանդեպ, կարող է սահմանափակել ՀՀ հնարավորությունը այդպիսի ծառայություններ մատուցելու գործում սահմանի բացումից հետո:

Ազդեցությունը ՓՄՁ-ների, մարզերի տեղական արտադրողների և բնակչության վրա: Խոցելի խումբ կարող է համարվել ՀՀ ծառայություններ մատուցող (հատկապես առևտրի ոլորտի) ՓՄՁ-ները և տեղական արտադրողները, ինչպես մտահոգություն էր հայտնել Լիբերալ քաղաքականության ինստիտուտը: Սահմանի բացումը հատկապես բացասաբար կազդի այն ընկերությունների վրա, որոնք գործունեություն են իրականացնում Երևանից դուրս: ՀՀ-ում կարող են բացվել մասնագիտացված առևտրային կենտրոններ և խոշոր խանութներ կամ գյուղատնտեսական շուկաներ, որոնք հիմնականում կառաջարկեն ավելի մատչելի ապրանքներ՝ պարենային, միրգ բանջարեղեն, տնտեսական և հիգիենայի ապրանքներ և այլն, որոնք նաև կարող են արտադրվել և/կամ տեղում քաղվել և հավաքվել ու թարմ վիճակում ներմուծվել սահմանից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարգարայի անցակետից մինչև Երևան հեռավորությունը կազմում է շուրջ 20 կմ, և դա կարող է նույնիսկ չպահանջել հատուկ սառեցման պահեստների կամ բեռնատարների առկայություն որոշ դեպքերում: Սա կարող է հանգեցնել նրան, որ հատկապես առևտրի և մշակող արդյունաբերությունը ներկայացնող ՓՄՁ-ները դադարեցնեն իրենց գործունեությունը՝ չդիմանալով մրցակցությանը, ինչը կհանգեցնի գործազրկության մակարդակի աճին, իսկ մարզերի բնակիչները կամ կտեղափոխվեն Երևան, եթե բնակավայրը մոտ չէ քաղաքից, կամ էլ կարտագաղթեն:

Ազդեցությունը անշարժ գույքի շուկայի վրա: Բավականին բարդ է կանխատեսել անշարժ գույքի շուկայի գերաշխուժացում: Դա կարելի է

⁴³ Hrant Dink Foundation (2014). *Research on the Socio-economic Impact of the Turkey-Armenia Border*. Istanbul, Turkey: Hrant Dink Foundation Publications. 107p. <https://hrantdink.org/attachments/article/333/Research-Socio-Economic-Impact-of-the-Turkey-Armenia-Border.pdf>

կանխատեսել միայն կարճաժամկետ հատվածում, երբ գները կարող են կտրուկ բարձրանալ, իսկ միջնաժամկետում՝ կտրուկ անկում կգրանցեն: Դա կարող է հանգեցնել շինարարության ծավալների աճին սահմանի բացումից հետո առաջիկա 1-2 տարիներին, սակայն, որից հետո կարող է «ակտիվների փուչիկի պայթյուն» արձանագրվել միջնաժամկետ հատվածում:

Ազդեցությունը աշխատաշուկայի վրա: Սահմանի բացումից հետո Թուրքիայի սահմանամերձ շրջաններից ՀՀ եկող աշխատանքային միգրանտների ներհոսքը (ԱՄՆ դոլարի նկատմամբ կանխատեսվող թուրքական լիրայի արժեզրկման պարագայում, երբ ՀՀ դրամը համեմատաբար կայուն համարվի) ՀՀ-ում աճող գործազրկության մակարդակի պարագայում, կհանգեցնի նրան, որ հնդիկների հետ մրցակցության պայմաններում աշխատավարձերի անկում կարձանագրվի: Այս պարագայում ՀՀ տնային տնտեսությունների աշխատանքային տարիքի անդամները՝ զրկված լինելով եկամտի աղբյուրից և որոնք բարձր որակավորում չունեն բարձր վարձատրվող աշխատանք կատարելու համար, ստիպված կլինեն համաձայնել ավելի ցածր աշխատավարձի դիմաց աշխատել, քան եթե ՀՀ-ում աշխատեին միայն հնդիկներ:

Եզրակացություններ և առաջարկություններ: Գրեթե գոյություն չունեցող դեպի Թուրքիա ՀՀ ծագում ունեցող ապրանքների արտահանման պարագայում, ՀՀ արտադրողներին, գյուղացիական տնտեսություններին բավականին բարդ կլինի ներթափանցել թուրքական շուկա՝ հատկապես միջնաժամկետ հատվածում կանխատեսվող թուրքական լիրայի ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկման պարագայում՝ համեմատաբար կայուն ՀՀ դրամի դեպքում: Հետևաբար, Թուրքիայի հետ առևտրաշրջանառության փոփոխությունը հիմնականում պայմանավորված է լինելու ներմուծման ծավալների զգալի աճով: Ինչ վերաբերում է ՀՀ առևտրաշրջանառության փոփոխությանը, ապա դա հիմնականում կանդրադառնա դեպի ՌԴ ՀՀ ծագում ունեցող բացահայտված համեմատական առավելություններ ունեցող ապրանքային խմբերի արտահանման ծավալների կրճատմամբ՝ կանխատեսվող ՌԴ ռուբլու և Թուրքական լիրայի ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկման պարագայում: Եթե ՀՀ-ն կարողանա ներգրավել բուժման նպատակով ՀՀ այցելուների և ուսանողների Թուրքիայի սահմանամերձ շրջաններից, ապա դա որոշակիորեն կմեղմի ապրանքների արտահանման կտրվածքով արձանագրված կրճատումը, սակայն այնտեղ հիմնական գործոնը լիրայի արժեզրկման սահմաններն են: Եվ եթե ՀՀ-ն չկարողանա ներգրավել ավելի շատ զբոսաշրջիկներ, ավելացնել SS կամ ծառայությունների այլ ոլորտները ներկայացնող պրոդուկտների/ծառայությունների արտահանումը, կամ էլ ավելացնել արդյունահանման ծավալները և արձանագրվի մետաղական հանքաքարի արտադրությունը ներկայացնող ընկերությունների արտահանման ծավալների աճ, ապա ՀՀ ծառայությունների և ապրանքների արտահանման ծավալների անկում կգրանցի, իսկ ներմուծման ծավալները կաճեն: Հիմնականում խոցելի ոլորտներն են համարվելու գյուղատնտեսությունը՝ մասնավորաբար բուսաբուծությունը, սննդամթերքի վերամշակումը՝ հատկապես այն արտահանողները, որոնց հիմնական սպառման շուկան ՌԴ-ն է, հագուստի արտադրությունը: Ինչ

վերաբերում է խոցելի ընկերությունների տեսակներին, ապա դրանք հիմնականում լինելու են առևտրի ոլորտը ներկայացնող ՓՄՁ-ները, ինչպես նաև մարզային նշանակության մշակող արդյունաբերության ՓՄՁ-ները: Արդյունքում գործազրկության մակարդակը կաճի և կարող է արձանագրվել աշխատավարձերի կրճատում: Ուստի, մեր կողմից առաջարկվում են հետևյալ միջոցառումներ

- Խոցելի համարվող հագուստի պարագաների արտադրողները կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում կարող են սկսել ներգրավել արտապատկերման աշխատանքների պայմանագրեր՝ կար ու ձևի աշխատանքների իրականացման նպատակով: Միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածի կտրվածքով նրանք կարող են փորձել կենտրոնանալ միջին և բարձրակարգ հագուստի շուկայի սեզոնների վրա ինչպես ՀՀ-ում, այնպես էլ այլ երկրների շուկաներում՝ սփյուռքի ներկայացուցիչների, աշխարհահռչակ հայտնի մարդկանց իրենց մարքեթինգային արշավներում ներգրավելով և օգտագործելով վերջիններիս կապերը այլ երակներում տվյալ շուկայի սեզոնի մուտք գործելու համար՝ զուգահեռ համագործակցելով ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան հայազգի դիզայներների հետ⁴⁴: ՀՀ կառավարությունը կարող է աջակցել ընկերություններին մարքեթինգային արշավների վրա ծախսերի փոխհատուցում առաջարկելով, ինչպես նաև հայտնի դիզայներների կողմից հագուստի դիզայնի ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով: Կառավարությունը նաև կարող է աջակցել տեղական գիտահետազոտական ընկերություններին յուրահատուկ կտորների տեսակ կամ լուծումներ ստանալու նպատակով:

- Ավելացնել անասնաբուծության ծավալները և «մասշտաբի էֆեկտի» հիման վրա արտահանել նաև Թուրքիայի հետ սահմանամերձ շրջաններ՝ խելացի անասնագույների միջոցով ևս: 2019թ.-ի ապրիլի 4-ին ՀՀ կառավարությունը ընդունեց որոշում պետական աջակցության ծրագրի վերաբերյալ փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման նպատակով⁴⁵: Ծրագիրը ունի ֆիկսացվել է ժամանակի ընթացքում և արդեն 2025-2028թթ.-ին կավելանան 13-ով խելացի անասնաշենքերի քանակը (2025թ.-ի ապրիլին՝ բազային 58 այդպիսի անասնաշենք է գործել)⁴⁶: Ակնկալվում է, որ կավելանա անասնազլխաքանակը, կնվազի կաթի ինքնարժեքը և կավելանան արտադրության ծավալները, իսկ տնտեսվարողների եկամուտները կաճեն: Անասնաբուծության ծավալների աճը հատկապես կարևորվում է

⁴⁴ Dokholyan, S.V., & Makaryan, A.R. (2023). Impact Assessment of the Ban on Turkish Imports on the Growth of Wearing Apparel Manufacturing in Armenia. *Economy of Regions*, 19(4), pp. 1245-1246. <https://doi.org/10.17059/ekon.reg.2023-4-21>

⁴⁵ ՀՀ Կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N369-Լ որոշում «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին», <https://www.arlis.am/hy/acts/150937>

⁴⁶ ՀՀ Կառավարության 2025թ.-ի ապրիլի 10-ի N419-Լ որոշում «ՀՀ Կառավարության 2024թ.-ի օգոստոսի 22-ի N1392-Լ որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», <https://www.arlis.am/hy/acts/205676>

Թուրքիայի հետ սահմանամերձ համայնքներում՝ հիմք ընդունելով հողերի էրոզիան/դեգրադացիան և աղակալումը, որի պարագայում է անասնաբուծության ծավալների աճի արդյունքում կնվազի ներքին շուկայում վաճառվող մսի գինը՝ «մասշտաբի էֆեկտի» միջոցով և հնարավոր կլինի արտահանել կենդանի կենդանիները նաև Թուրքիա՝ Թուրքիայի հետ սահմանամերձ շրջանների բնակիչների հարցման արդյունքները⁴⁷։ Միևնույն ժամանակ այդ պարագայում կարևորվելու է կերի հարցը, որը պահանջելու է համապատասխան և հետևողական միջոցառումների իրականացում ՀՀ կառավարության կողմից՝ հաշվի առնելով հողի ներկա վիճակը։ Առաջարկվում է, որ կառավարությունն ավելացնի ֆինանսավորումը այսպիսի մասնաշենքերի կառուցման նպատակով։

• Կառավարությունը կարող է հատկապես սննդամթերքի վերամշակմամբ զբաղվող ընկերությունների համար համալիր միջոցառումների փաթեթ մշակել, որոնք նախատեսված կլինեն արևմտյան ստանդարտներին համապատասխան ապրանքներ արտադրելու համար, մասնակի փոխհատուցում տրամադրել արևմտյան շուկաներում առաջնորման և լոգիստիկ ծախսերի դիմաց։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 20-ի N 1708 – Ն որոշում «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին», <https://www.e-gov.am/gov-decrees/item/34943/>
2. ՀՀ Կառավարության 2021 թվականի հունիսի 24-ի N 1048 - Ն որոշում «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին», <https://e-gov.am/gov-decrees/item/36446/>
3. ՀՀ Կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N 369-Լ որոշում «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին», <https://www.arlis.am/hy/acts/150937>
4. ՀՀ Կառավարության 2025 թվականի ապրիլի 10-ի N 419-Լ որոշում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», <https://www.arlis.am/hy/acts/205676>
5. Լիբերալ քաղաքականության ինստիտուտ (2024). Հայ-թուրքական սահման. խնդիրներ, մտահոգություններ, առաջարկներ։ Երևան, 2024, 102 էջ։ <https://liberalinstitute.am/wp-content/uploads/2024/01/հայ-թուրքական-սահման-ձեռնարկ.pdf>։

⁴⁷ Hrant Dink Foundation (2014). *Research on the Socio-economic Impact of the Turkey-Armenia Border*. Istanbul, Turkey: Hrant Dink Foundation Publications. 107p. <https://hrantdink.org/attachments/article/333/Research-Socio-Economic-Impact-of-the-Turkey-Armenia-Border.pdf>

6. Թորոսյան Թ., Հայրապետյան Գ., Գալոյան Դ., Հովականյան Ն., Կոտիկյան Ն., Սարգսյան Լ. 2012, Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 173-207
7. Փախլյան Ա., Աղաջանյան Ս., Վարդանյան Տ., Միքայելյան Տ., Հարությունյան Ա. (2022). «Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջափակման հնարավորություններն ու մարտահրավերները» - Երևան: Տնտեսագետ, 2022. - 189 էջ («Ամբերդ» մատենաշար 57): <https://doi.org/10.52174/978-9939-61-255-3>:
8. Balassa, B. (1965). Trade Liberalisation and “Revealed” Comparative Advantage. The Manchester School of Economic and Social Studies, 33(2), pp. 99-123, <https://doi.org/10.1111/j.1467-9957.1965.tb00050.x>.
9. Lafay, G. (1992). The Measurement of Revealed Comparative Advantages. In: Dagenais, M.G. and. Muet, P.A. (eds.), International Trade Modelling, London: Chapman & Hall, pp. 209-234.
10. Dokholyan, S.V., & Makaryan, A.R. (2023). Impact Assessment of the Ban on Turkish Imports on the Growth of Wearing Apparel Manufacturing in Armenia. *Economy of Regions*, 19(4), 1237–1250. <https://doi.org/10.17059/ekon.reg.2023-4-21>
11. Hrant Dink Foundation (2014). *Research on the Socio-economic Impact of the Turkey-Armenia Border*. Istanbul, Turkey: Hrant Dink Foundation Publications. 107p. <https://hrantdink.org/attachments/article/333/Research-Socio-Economic-Impact-of-the-Turkey-Armenia-Border.pdf>
12. Khachatryan, H. (2019). Economic impacts of re-opening the Armenian-Turkish border. Heinrich Böll Stiftung Georgia, 3p. https://ge.boell.org/sites/default/files/2019-11/Economic_Impacts_of_Re-opening-Khachatryan.pdf
13. Topcu, B., & Sarigül, S. (2015). Comparative Advantage and the Product Mapping of Exporting Sectors in Turkey. The Journal of Academic Social Science 18(18). 330-348. <https://doi.org/10.16992/ASOS.856>
14. Pakhlyan, A., Aghajanyan, S., Vardanyan, T., Mikayelyan, T., & Harutyunyan, A. (2021). Impact of Possible Unblocking of Armenia by Turkey on the Economic Development of Armenia. *Messenger of Armenian State University of Economics*, 5, 127–142. https://doi.org/10.52174/1829-0280_2021_5_127
15. Widodo, T. (2009). Comparative Advantage: Theory, Empirical Measures and Case Studies. *Review of Economic and Business Studies*, Alexandru Ioan Cuza University, Faculty of Economics and Business Administration, Issue 4, pp. 57-81.
16. Yu, R., Cai, J., & Leung, P. (2008). The normalized revealed comparative advantage index. The Annals of Regional Science, 43(1), 267–282. <https://doi.org/10.1007/s00168-008-0213-3>
17. ՀՀ ՎԿ-ի «Արտաքին առևտրի տվյալների բազա՝ ըստ երկրների (2017-2025)» աղանցի բազա, <https://www.armstat.am/am/?nid=717>:
18. The World Bank. (n.d.). *World development indicators, online database*. <https://databank.worldbank.org/source/world-development-indicators>

19. Central Bank of the Republic of Turkey. (n.d.). Indicative exchange rates. TCMB. <https://www.tcmb.gov.tr/wps/wcm/connect/en/tcmb+en/main+menu/statistics/exchange+rates/indicative+exchange+rates>
20. Central Bank of the Russian Federation. (2025, December 10). Macroeconomic survey of the Bank of Russia. Bank of Russia. https://www.cbr.ru/eng/statistics/ddkp/mo_br/?f-
21. EBC Financial Group. (2025, June 18). Turkish Lira to USD Rate by 2030: Will the Lira Recover? EBC Financial Group, <https://www.ebc.com/forex/turkish-lira-to-usd-rate-by--will-the-lira-recover>.

ՀՀ-ԹՈՒՐԹԻԱ ՄԱՀՄԱՆԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՇՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՎՐԱ

ԱՆՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Համառոտագիր

Հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման արդյունքում ՀՀ առևտրա-շրջանառության փոփոխության քննարկումը շատ կարևոր է հատկապես թե դա ինչպես կազդի ՀՀ տնտեսության, ինչն էլ պայմանավորում է տվյալ **հետազոտության արդիականությունը**: Հոդվածի նպատակն է վերլուծել ՀՀ-Թուրքիա առևտրաշրջանառության շարժընթացը, բացահայտել թուրքական ծագում ունեցող այն ապրանքային խմբերը, որոնք ունեն բացահայտված համեմատական առավելություններ ՀՀ-ում ինչպես նաև հաշվարկել ՀՀ և Թուրքիայի Առևտրային հաշվեկշռի համաթվերը պարզելու, թե ինչպես կփոխվի ՀՀ-ի առևտրա-շրջանառությունը՝ նշելու խոցելի ոլորտները և ընկերությունների տեսակները: Ներկայացված նպատակի իրագործման համար հոդվածում **խնդիր է դրվել**

- Վերլուծել ՀՀ-Թուրքիա առևտրաշրջանառությունը
- Հաշվարկել թուրքական ծագում ունեցող ըստ ԱՏԳ ԱԱ երկիշ ապրանքային խմբերի Բալասսայի բացահայտված համեմատական առավելությունների համաթվերը ՀՀ-ում, ՀՀ-ի նույն համաթվերը աշխարհով մեկ, ինչպես նաև ՀՀ-ի և Թուրքիայի Առևտրային հաշվեկշռի համաթվերը:

- Ներկայացնել ինչպես կփոխվի ՀՀ առևտրաշրջանառությունը ՀՀ-Թուրքիա սահմանի հնարավոր բացման հետևանքով:

- Մատնանշել այն ոլորտները և ընկերության տեսականները, որոնք խոցելի կհամարվեն ՀՀ-Թուրքիա սահմանի հնարավոր բացման հետևանքով:

Ստացված արդյունքները: Գրեթե գոյություն չունեցող դեպի Թուրքիա ՀՀ ծագում ունեցող ապրանքների արտահանման պարագայում, ՀՀ արտադրողներին, գյուղացիական տնտեսություններին բավականին բարդ կլինի ներթափանցել թուրքական շուկա՝ հատկապես միջնաժամկետ հատվածում կանխատեսվող թուրքական լիրայի ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկման պարագայում: Հետևաբար, Թուրքիայի հետ առևտրաշրջանառության փոփոխությունը հիմնականում պայմանավորված է լինելու ներմուծման ծավալների զգալի աճով: Ինչ վերաբերում է ՀՀ առևտրաշրջանառության փոփոխությանը, ապա դա հիմնական

նում կանդրադառնա դեպի ՌԴ ՀՀ ծագում ունեցող բացահայտված համեմատական առավելություններ ունեցող ապրանքային խմբերի արտահանման ծավալների կրճատմամբ՝ կանխատեսվող ՌԴ ռուբլու և Թուրքական լիրայի ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկման պարագայում: Հիմնականում խոցելի ոլորտներն են համարվելու գյուղատնտեսությունը՝ մասնավորաբար բուսաբուծությունը, սննդամթերքի վերամշակումը՝ հատկապես այն արտահանողները, որոնց հիմնական սպառման շուկան ՌԴ-ն է, հագուստի արտադրությունը: Ինչ վերաբերում է խոցելի ընկերությունների տեսակներին, ապա դրանք հիմնականում լինելու են առևտրի ոլորտը ներկայացնող ՓՄՁ-ները, ինչպես նաև մարզային նշանակության մշակող արդյունաբերության ՓՄՁ-ները: Առաջարկվել են միջոցառումներ նվազեցնելու մի շարք ոլորտներում ակնկալվող անկումը սահմանի բացվելուց հետո:

Ստացված արդյունքների կիրառման հնարավորությունները: Սույն հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը ՀՀ տնտեսության վրա սահմանի բացման տնտեսական ազդեցությունը գնահատելիս և համապատասխան միջոցառումները մշակելիս, որոնց նպատակը կլինի մեղմելու հնարավոր բացասական ազդեցությունը:

Բանալի բառեր. Հայ-թուրքական սահմանի բացում, Հայաստան, Թուրքիա, արտահանում, ներմուծում, գյուղատնտեսություն, հագուստի արտադրություն

ВЛИЯНИЕ ВОЗМОЖНОГО ОТКРЫТИЯ АРМЯНО-ТУРЕЦКОЙ ГРАНИЦЫ НА ТОРГОВЫЙ ОБОРОТ И СФЕР ЭКОНОМИКИ АРМЕНИИ

АННА МАКАРЯН

Аннотация

Актуальность статьи: Обсуждение изменений в товарообороте Армении в результате возможного открытия армяно-турецкой границы очень важно, особенно с точки зрения того, как это повлияет на экономику Армении, что обуславливает актуальность данного исследования.

Цель статьи-проанализировать динамику торгового оборота между Арменией и Турцией, выявить товарные группы турецкого происхождения, которые имеют выявленные сравнительные преимущества в Армении, а также рассчитать показатели торгового баланса Армении и Турции, чтобы выяснить, как изменится торговый оборот Армении, указать уязвимые сферы экономики и типы компаний.

Для достижения поставленной цели в статье поставлены следующие **задачи**

- Проанализировать товарооборот между Арменией и Турцией
- Рассчитать показатели выявленные сравнительные преимущества, предложенные Балассой для двухзначных товарных групп турецкого

происхождения по ТН ВЭД в Армении, те же показатели в Армении по всему миру, а также показатели торгового баланса Армении и Турции.

- Представить, как изменится торговый оборот Армении в результате возможного открытия армяно-турецкой границы.

- Указать отрасли экономики и типы компаний, которые будут сочтены уязвимыми в результате возможного открытия армяно-турецкой границы.

Полученные результаты: В случае экспорта в Турцию товаров армянского происхождения, которых практически не существует, производителям и фермерским хозяйствам Армении будет довольно сложно проникнуть на турецкий рынок, особенно в условиях прогнозируемого в среднесрочной перспективе обесценивания турецкой лиры по отношению к доллару США. Следовательно, изменение торгового оборота с Турцией в основном будет обусловлено значительным увеличением объемов импорта. Что касается изменения товарооборота Армении, то это в основном отразится на сокращении объемов экспорта товарных групп армянского происхождения, имеющих выявленные сравнительные преимущества особенно в России, в случае прогнозируемого обесценивания российского рубля и турецкой лиры по отношению к доллару США. В основном уязвимыми сферами экономики, будут считаться сельское хозяйство, в частности растениеводство, пищевая промышленность, и особенно те экспортеры, основным рынком потребления которых является Россия, и отрасль производства одежды. Что касается типов уязвимых компаний, то в основном это будут МСП, представляющие сектор торговли, а также МСП обрабатывающей промышленности регионального значения. Были предложены меры по снижению ожидаемого спада в ряде секторов экономики после открытия границы.

Возможности применения полученных результатов: Результаты данного исследования могут быть полезны министерству экономики РА при оценке экономического воздействия открытия границы на экономику РА и разработке соответствующих мер, целью которых будет смягчение возможного негативного воздействия:

Ключевые слова: Открытие армяно-турецкой границы, Армения, Турция, экспорт, импорт, сельское хозяйство, производство одежды

THE IMPACT OF THE POSSIBLE OPENING OF THE ARMENIAN-TURKISH BORDER ON TRADE TURNOVER AND ECONOMIC SECTORS OF ARMENIA

ANNA MAKARYAN

Abstract

Relevance of the article: The analysis of potential changes in Armenia's trade resulting from the possible opening of the Armenian-Turkish border is highly relevant, as such changes may have significant implications for the overall performance and structural dynamics of the Armenian economy.

The purpose of the article is to analyze the dynamics of trade between Armenia and Turkey, identify commodity groups of Turkish origin that have comparative advantages in Armenia, as well as to calculate the Trade balance indices of Armenia and Turkey to find out how Armenia's trade will change, identify vulnerable sectors of the economy and types of companies. To achieve **this goal**, the following tasks have been set in the article:

- To analyze the trade between Armenia and Turkey;
- To calculate the indicators of the revealed comparative advantages offered by Balassa for two-digit commodity groups of Turkish origin of the HS in Armenia, the same indicators of Armenia, as well as the indicators of the trade balance of Armenia and Turkey;
- To highlight how Armenia's trade will change as a result of the possible opening of the Armenian-Turkish border;
- To specify the economic sectors and types of companies that will be considered vulnerable to possible border opening.

Main Research Findings: Given that exports of Armenian-origin goods to Turkey are currently negligible, Armenian producers and farms are likely to face substantial difficulties in entering the Turkish market, particularly in the context of the expected medium-term depreciation of the Turkish lira against the US dollar. As a result, changes in bilateral trade are expected to be driven primarily by a significant increase in imports from Turkey. More broadly, Armenia's trade structure may be adversely affected through a reduction in exports of Armenian-origin commodity groups that currently exhibit revealed comparative advantages, especially in the Russian market, under conditions of projected depreciation of both the Russian ruble and the Turkish lira against the US dollar. The most vulnerable sectors are agriculture, the food processing industry, and wearing apparel manufacturing, with heightened exposure among exporters whose primary market is Russia. SMEs, especially those engaged in trade and regionally oriented manufacturing, are expected to be the most vulnerable.

Practical Implications of the Findings: The obtained results can be useful to the RA Ministry of Economy in assessing the economic impact of the opening of the border on the Armenian economy and developing appropriate mitigation measures of negative impacts.

Keywords: Opening of the Armenian-Turkish border, Armenia, Turkey, export, import, agriculture, wearing apparel manufactur